Հաշվի առնելով, որ Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող 0.04հա մակերեսով հողամասը ՀՀ կառավարության 06.10.2005թ թիվ 2417-Ն որոշմամբ փոխանցվել է Իջևան համայնքին որպես արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության հողամաս՝ գործառնական նշանակությունը արդյունաբերական հողեր /ծածկագիր 11-001-0005-0013/, և ՀՀ կառավարության 2006թ նոյեմբերի 30-ի թիվ 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագծում նույնպես հողամասը նշված է որպես արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, որպես արդյունաբերական գործառնական նշանակության հողեր, և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14³ հոդվածի, ՀՀ կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 17.1 կետի պահանջներով՝ ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստում քննարկելու համար, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Տալ հավանություն ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխության նախագծին /գլխավոր հատակագիծ/՝

Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող 0.04հա մակեկեսով հողամասը /ծածկագիր 11-001-0005-0013/ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության հողամասերի /գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական/ կազմից հանելու և բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատում:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՏՈՒՐ ՕՀԱՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*25 փետրվարի 2016թ. N 19*

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

16.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող 6.58հա մակերեսով հողամասը ՀՀ կառավարության 06.10.2005թ թիվ 2417-Ն որոշմամբ նշված հողամասը Իջևան համայնքին է փոխանցվել որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամաս՝ գործառնական նշանակությունը վարելահող /ծածկագիր 11-001-0233-0006/, և ՀՀ կառավարության 2006թ նոյեմբերի 30-ի թիվ 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագծում նույնպես հողամասը նշված է որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամաս, գործառնական նշանակությունը՝ վարելահող, և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի, ՀՀ կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 17.1 կետի պահանջներով՝ ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստում քննարկելու համար, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է***

1. Տալ հավանություն ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխության նախագծին /գլխավոր հատակագիծ/՝ Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող 6.58հա մակեկեսով հողամասը /ծածկագիր 11-001-0233-0006/ գյուղատնտեսական նպատակային նշանակության /գործառնական նշանակությունը վարելահող/ հողամասերի կազմից հանելու և.

ա/ 0.8հա մակերեսով հողամասը արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն, գործառնական նշանակությունը՝ արտադրական,

բ/ 2.06հա ընդհանուր մակերեսով երկու հողամասերը /0.64հա մակերեսով և 1.42հա մակերեսով/ բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատում,

գ/ 2.25հա մակերեսով հողամասը բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատում,

դ/ մնացած 1.47հա մակերեսով հողամասը բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն, որպես ընդհանուր օգտագործման տարածք /ըստ կից սխեմայի/:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՎԱՀԵ ԴԱԼՈՒՄՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ԴԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# ՈՐՈՇՈՒՄ

*25 փետրվարի 2016թ. N 20*

## 17.ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ,,ՏՈՅՈՏԱ ՔԱՄՐԻ ,,ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ՈՐԻՑ ՀԵՏՈ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքը իր բազմաբնույթ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներով առընչվում է ինչպես հարևան համայնքների, այնպես էլ հանրապետական բազմաթիվ կառավարական մարմինների ու միջազգային կազմակերպությունների հետ:

Քանի որ քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող 2009թ. արտադրության ,,Տոյոտա քամրի,, մակնիշի ավտոմեքենան հնացել է, շահագործումը, սպասարկումը կապված է մեծ ծախսերի հետ և մեքենայի հետագա օգտագործումը ֆինանսապես աննպատակահարմար է, ուստի անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել ծառայողական ավտոմեքենա:

Իջևան համայնքի ավագանին որոշում է

Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝

1.Քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող ,,Տոյոտա քամրի,, մակնիշի 008LU57 պետհամարանիշի ավտոմեքենան ներկայացնել գնահատման, որից հետո գնահատման արժեքը համարել աճուրդի մեկնարկային գին և մեքենան ներկայացնել աճուրդային վաճառքի:

2. Քաղաքապետարանի համար ձեռք բերել ծառայողական ավտոմեքենա մինչև 20 մլն ՀՀ դրամ արժողությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ — ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ — ԳՐԻԳՈՐ ՂԱՆԻԵԼՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ — ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ — ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ — ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## Իջևան քաղաքային համայնքի ավագանի
## ՈՐՈՇՈՒՄ

*25 փետրվարի 2016թ. N 21*

**18.ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ, ԹԻՎ 18/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ Մ/Ճ ՊՈԱԿ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Իջևան համայնքի ղեկավարին է դիմել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրինությունը, ի դեմս տնօրեն Ս.Առաքելյանի, ԵՊՀ Իջևանի մ/ճ ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված, ՀՀ Տավուշի մարզի, Իջևան քաղաքի, Ուսանողական փողոցի, թիվ 18/2 հասցեում գտնվող, Իջևան համայնքի սեփականությունը հանդիսացող, 0,03258հա մակերեսով հողատարածքը և շինությունները /վկայական թիվ 20102015-11-0027, ծածկագիր 11-001-0154-0085/ Հայաստանի Հանրապետությանը հետ նվիրելու առաջարկով:
Քննարկելով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրինության առաջարկությունը և հիմք ընդունելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 5-րդ հոդվածի 4-րդ կետը .

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1.Տալ համաձայնություն, ԵՊՀ Իջևանի մ/ճ ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված, ՀՀ Տավուշի մարզի, Իջևան քաղաքի, Ուսանողական փողոցի, թիվ 18/2 հասցեում գտնվող, Իջևան համայնքի սեփականությունը հանդիսացող, 0,03258հա մակերեսով հողատարածքը և շինությունները /վկայական թիվ 20102015-11-0027, ծածկագիր 11-001-0154-0085/ Հայաստանի Հանրապետությանը հետ նվիրելուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ — կողմ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ — կողմ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ — կողմ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ — կողմ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ — կողմ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ — կողմ
ՎԱՀԵ ԴԱԼՈՒՄՅԱՆ — կողմ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ — կողմ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ — կողմ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ — կողմ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ — կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*25 փետրվարի 2016թ. N 22*

## 19. ԻՋԵՎԱՆ (ՆԱԽԿԻՆ ՔԱՐՎԱՆՍԱՐԱ) ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքը /նախկին Քարվանսարան/ որպես բնակավայր դեռևս չունի իր հիմնադրման մասին փաստագրված պատմություն: Իջևան քաղաքի բնակիչ, ՀՀ գրողների միության անդամ Ռուբեն Սիմոնյանի նախաձեռնությամբ և քաղաքապետարանի աջակցությամբ նախատեսվում է հրատարակել Իջևանի պատմության վերաբերյալ գիրք, որի համար անհրաժեշտ է իրականացնել արխիվային փաստաթղթերի և նյութերի մեծածավալ և երկարաժամկետ ուսումնասիրություն: Հաշվի առնելով կատարվելիք աշխատանքի կարևորությունը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ օրենքով սահմանված կարգով ֆինանսական աջակցություն ցուցաբերել Իջևան քաղաքի պատմությանը վերաբերվող գրքի հրատարակման համար անհրաժեշտ արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության և նախապատրաստական նյութերի մշակման աշխատանքների իրականացմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*25 փետրվարի 2016թ. N 23*

### 20. ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ ,,Վարձատրվող հասարակական աշխատանքներ,, ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Իջևանի քաղաքային զբոսայգու և Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանի տարածքների բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 2 մլն 123 հազար ՀՀ դրամ: Այս ծրագրով ժամանակավոր աշխատանքով կապահովվեն զբաղվածության կենտրոնում հաշվառված 15 գործազուրկներ:

Հաշվի առնելով վերոհիշյալը

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ համայնքի 2016թ վարչական բյուջեից կատարել 623000 ՀՀ դրամ ներդրում ,,Իջևանի քաղաքային զբոսայգու և Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանի տարածքների բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ,, ծրագրի իրականացման համար:
2. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը վերոնշյալ ծրագրի իրականացման համար ՀՀ ֆին նախարարության գործառնական վարչության կենտրոնական գանձապետարանում բացել եկամտային հաշիվ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

*25 փետրվարի 2016թ. N 24*

## 1. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ ՀՀ համայնքային ծառայության օրենքում կատարված փոփոխությունների համաձայն /15.12.2015թ ՀՕ-148/ համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվում է համայնքի ավագանու 1 անդամ:

Հաշվի առնելով վերոհիշյալը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկել Համիկ Ամիրյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## Իջևան քաղաքային համայնքի ավագանի
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*25 փետրվարի 2016թ. N 25*

### 22.ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով առանց մրցույթի կառուցապատման իրավունքով հողամասեր հատկացնելու մասին:

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1.Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով՝ աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը համաձայն աղյուսակի

| hh | Նպատակը | Հասցե | Մակերեսը/քմ |
|---|---|---|---|
| 1 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 22.0 |
| 2 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 26.5 |
| 3 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Բլբուլյան փ. | 27.0հող/27.0 շին. |
| 4 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 29.0 |
| 5 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Անկախության փ. | 26.2 հող/26.2շին. |
| 6 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Անկախության փ. | 31.2 հող/31.2 շին. |
| 7 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Բլբուլյան փ. | 29.3հող/29.3 շին. |
| 8 | Բնակելի կառուցապատում | Արցախյան փ. | 16.0 |
| 9 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 120.0 |
| 10 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 1674.0 |
| 11 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 47.0 |
| 12 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 80.0 |
| 13 | Հասարակական կառուցապատում | Արցախյան փ. | 112.0 |
| 14 | Բնակելի կառուցապատում | Մետաղագործների փ. | 160.4 |
| 15 | Հասարակական կառուցապատում /ինքնակամ առևտրի սրահ/ | Արցախյան փ. | 45.6 հող/45.6 շին. |
| 16 | Բնակելի կառուցապատում | Մետաղագործների փ. | 30.0 |
| 17 | Բնակելի կառուցապատում | Մետաղագործների փ. | 29.8 |
| 18 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 41.0 |
| 19 | Բնակելի կառուցապատում | Այգեստան փ. | 800.0 |
| 20 | Բնակելի կառուցապատում | Սպանդարյան փ. | 81.0 |
| 21 | Բնակելի կառուցապատում | Տերյան փ. | 19.8 |
| 22 | Բնակելի կառուցապատում | Աբովյան փ. | 2x 19.8 |
| 23 | Բնակելի կառուցապատում | Արցախյան փ. | 48.0 |
| 24 | Հասարակական կառուցապատում | Աբովյան փ. | 19.4 |
| 25 | Հասարակական կառուցապատում | Վասիլյան փ. | 50.0 |
| 26 | Հասարակական կառուցապատում | Արցախյան փ. | 36.0 |
| 27 | Ոչ բնակելի տարածք | Անկախության փ. | 11.3 |
| 28 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 36.0 |
| 29 | Բնակելի կառուցապատում | Սպանդարյան փ. | 65.9 |

| | | | |
|---|---|---|---|
| 30 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Անկախության փ. | 20.1 hող/20.1 շին. |
| 31 | Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | Երևանյան փ. | 19.9 |
| 32 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 600.0 |
| 33 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ տնտ. շին./ | Ազատամարտիկների փ. | 15.1 hող/26.9 շին. |
| 34 | Բնակելի կառուցապատում | Մետաղագործների փ. | 854.8 |
| 35 | Բնակելի կառուցապատում | Մետաղագործների փ. | 197.7 |
| 36 | Բնակելի կառուցապատում | Մետաղագործների փ. | 57.5 |
| 37 | Բնակելի կառուցապատում | Մետաղագործների փ. | 140.0 |
| 38 | Հասարակական կառուցապատում | Մետաղագործների փ. | 90.0 |
| 39 | Բնակելի կառուցապատում | Մետաղագործների փ. | 2x500.0 |
| 40 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 44.0 |
| 41 | Բնակելի կառուցապատում | Միհրաբյան փ. | 1240.0 |
| 42 | Հասարակական կառուցապատում/ընդ/ | Անկախության փ. | 137.3 |
| 43 | Հասարակական կառուցապատում | Անկախության փ. | 38.1 |
| 44 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Ազատամարտիկների | 47.0 hող/47.0 շին. |
| 45 | Հասարակական կառուցապատում | Արցախյան փ. | 50.9 |
| 46 | Բնակելի կառուցապատում | Երիտասարդական փ. | 2x 19.8 |
| 47 | Բնակելի կառուցապատում | Անկախության փ. | 2x 19.8 |
| 48 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 2x19.8 |
| 49 | Բնակելի կառուցապատում | Մետաղագործների փ. | 2x19.8 |
| 50 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Անկախության փ. | 24.0 hող/24.0 շին. |
| 51 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Երիտասարդական փ. | 33.0 hող/33.0 շին. |
| 52 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Աբովյան փ | 22.2hող./22.2 շին |
| 53 | Բնակելի կառուցապատում | Ս.Օհանյան փ | 5x19.8 |
| 54 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ | 37,8 |
| 55 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ | 250,0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## Իջևան քաղաքային համայնքի ավագանի
## ՈՐՈՇՈՒՄ

*25 փետրվարի 2016թ. N 26*

### 23. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ,,ԻՋԵՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ,, ՀՈԱԿ ԵՎ ,,ՊԱՏՄԱԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ,, ՀՈԱԿ ՄԵԿԱԿԱՆ ՀԱՍՏԻՔՆԵՐ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ «ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Բ/Հ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ ՀՀ կառավարության 02.04.2016թ թիվ 88-Ն որոշմամբ Իջևանի ՔԿԱԳ բաժնի պահպանման համար լրացուցիչ հատկացվել է 28,6 հազ դրամ, իսկ 17.04.2014թ թիվ 534-Ն որոշմամբ «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով 1500,0 հազ դրամ, 467,5 հազ դրամ աշխատավարձի մասնակի փոխհատուցման համար:

Բացի այդ անհրաժեշտություն է առաջացել բյուջեի եկամտային մասը ավելացնել ևս 10000,0 հազ դրամ, հիմնական միջոցների օտարման առաջադրանքը 3650,0 հազ դրամ, իսկ ծախսային մասում կատարել11528,6 հազ դրամ վերաբաշխումներ:

Ելնելով վերոգրյալից .

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

Տալ համաձայնություն քաղաքապետի առաջարկությանը

1. 2016թ բյուջեի եկամտային և ծախսային մասը ավելացնել 11528,6 հազ դրամ:

Եկամտային մասում 28,6 հազ դրամ ավելացնել 47.1 բաժնի 900375121184 հաշվին Իջևանի ՔԿԱԳ պահպանման համար, 5000,0 հազ դրամ 7.2 բաժնի 900375121036 հաշվին, 5000,0 հազ դրամ 46.5 բաժնի 900375121499 հաշվին, 1500,0 հազ դրամ 47.1. բաժնի 900375001493 հաշվին, 467,5 հազ դրամ 37.4. բաժնի 900375121200 հաշվին:

2. Վարչական բյուջեի ավելացված գումարից 28,6 հազ դրամ հատկացնել ՔԿԱԳ պահպանման ծախսերի 1.6.1 բաժնի 4252 հոդվածին, 750,0 հազ դրամ քաղաքապետարանի պահպանման ծախսերի 1.1.1 բաժնի 4252 հոդվածին, 650,0 հազ դրամ 4237 հոդվածին, 1000,0 դրամ10.7.1 բաժնի 4729 հոդվածին, 2100,0 հազ դրամ 8.2.4 բաժնի 4239 հոդվածին, 5000,0 հազ դրամ հատկացնել «Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն» բ/հ պահպանման ծախսերի 5.1.1 բաժնի 4111 հոդվածին, 500,0 հազ դրամ 4262 հոդվածին, 1200,0 հազ դրամ հատկացնել 1.1.1 բաժնի 4111 հոդվածին, 132,0 հազ դրամ 4262 հոդվածին, 168,0 հազ դրամ 4269 հոդվածին:

Բացի այդ 5.1.1 բաժնի 4215 հոդվածի երկրորդ եռամսյակի համար նախատեսված գումարից 51,0 հազ դրամ, 4823 հոդվածի երկրորդ եռամսյակից 120,0 հազ դրամ համապատասխանաբար տեղափոխել առաջին եռամսյակ:

3. Ելնելով անհրաժեշտությունից երկու մեթոդիստի հաստիք ավելացնել ,,Իջևանի մշակույթի տուն,, ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում /դրույքաչափը 72751 դրամ/, մեկ մասնագետի հաստիք ավելացնել ,,Պատմաերկրագիտական թանգարան,, ՀՈԱԿ-ում /դրույքաչափը 72751 դրամ/: «Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն» բ/հ կատարել դրույքաչափերի փոփոխություն /կցվում են հաստիքացուցակները/:

4. Հիմնական միջոցների օտարման առաջադրանքը ավելացնել 3650,0 հազ դրամ:

5. Հաստատել Իջևան համայնքի ճշտված բյուջեն 512088,1 հազ դրամ եկամտային 513159,9 հազ դրամ վարչական բյուջեի, 2090,5 հազ դրամ ֆոնդային բյուջեի ընդամենը 515250,4 հազ դրամ ծախսերի գծով /հավելված 1,2/: Բյուջեի դիֆիցիտը կազմում է 3162.3 հազ դրամ, որի ծածկմանն է ուղղվում 3162,3 հազ դրամ տարեսկզբի ազատ մնացորդը, այդ թվում 1071,8 վարչական, 2090,5 ֆոնդային բյուջեի մասով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ կողմ — ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ կողմ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ կողմ — ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ կողմ — ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ԴԱԼՈՒՄՅԱՆ կողմ — ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ կողմ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ կողմ — ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Իջևան համայնքի ավագանու

25.02.2016թ. թիվ 26 որոշման

**<<ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ>> ՀԻՄՆԱՐԿ**

հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2016թ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը ( դրամ ) | ___% հավելավճար* ( դրամ ) | Ամսական աշխատավարձ ( դրամ ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 280000 | | 280000 |
| 2 | Փոխտնօրեն | 1 | 120000 | | 120000 |
| 3 | Տնօրենի տեղակալ | 1 | 90000 | | 90000 |
| 4 | Ինժեներ | 1 | 190000 | | 190000 |
| 5 | Ինժեներ | 1 | 105000 | | 105000 |
| 6 | Գլխ հաշվապահ | 1 | 100000 | | 100000 |
| 7 | Հաշվապահ | 1 | 93000 | | 93000 |
| 8 | Արտ. բաժնի վարիչ | 1 | 95000 | | 95000 |
| 9 | Կադրերի բաժնի վարիչ | 1 | 90000 | | 90000 |
| 10 | Իրավաբան | 1 | 87700 | | 87700 |
| 11 | Ավագ մասնագետ | 1 | 82700 | 5153 | 87853 |
| 12 | Բանվոր | 2 | 72751 | | 145502 |
| 13 | Բանվոր | 1 | 92000 | | 92000 |
| 14 | Բանվոր | 11 | 72751 | 25765 | 826026 |
| 15 | Պահակ | 2 | 72751 | | 145502 |
| 16 | Պահակ | 9 | 72751 | | 654759 |
| 17 | Էլեկտրիկ | 1 | 72751 | | 72751 |
| 18 | Հավաքարար | 23 | 72751 | 30918 | 1704191 |
| 19 | Հսկիչ-հավաքարար | 4 | 92061 | | 368244 |
| 20 | Վարորդ | 2 | 72751 | | 145502 |
| 21 | Վարորդ | 2 | 127000 | | 254000 |
| 22 | Վարորդ | 4 | 87700 | 5153 | 355953 |
| 23 | Սան.մաքրման հսկիչ | 1 | 72751 | | 72751 |
| 24 | Փականագործ | 1 | 80513 | | 80513 |
| 25 | . Մասնագետ | 2 | 72751 | 5153 | 150655 |
| 26 | Կանաչապատման մասն. | 1 | 72751 | 5153 | 77904 |
| 27 | Ավտոփականագործ | 1 | 118000 | | 118000 |
| | Ընդամենը | 78 | X | 77295 | 6602806 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*25 փետրվարի 2016թ. N 27*

## 24. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ ԱՊՐԻԼԻ 03-Ի <<ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱԽԿԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ 805.0ՔՄ ՇԵՆՔԱՅԻՆ ՄԱԿԵՐԵՍԻՑ 595.5ՔՄ-Ն /363.0ՔՄ 1-ԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ, 78.4ՔՄ ԽՈՀԱՆՈՑԸ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻՑ 154.1ՔՄ/՝ ԻՋԵՎԱՆԻ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ, 182.4ՔՄ-Ն՝ <<ԱՎԱՆԴՈՒՅԹ>> ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 19 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել Իջևան համայնքի ավագանու 2015թ ապրիլի 03-ի թիվ 19 որոշումը ճանաչել ուժը կորցրած:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի թիվ 72-րդ հոդվածի, 1-ին կետի, 1-ին մասի բ/ ենթակետի դրույթներով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Իջևան համայնքի ավագանու 2015թ ապրիլի 03-ի <<Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող Երտասարդական փողոցի թիվ 2 հասցեում գտնվող նախկին մանկապարտեզի 805.0քմ շենքային մակերեսից 595.5քմ-ն /363.0քմ 1-ն մասնաշենքը, 78.4քմ խոհանոցը և 2-րդ մասնաշենքի առաջին հարկից 154.1քմ/ Իջևանի վարժարանին, իսկ 182.4քմ-ն <<Ավանդույթ>> ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին >> թիվ 19 որոշումը ճանաչել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*25 փետրվարի 2016թ. N 28*

## 25. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱԽԿԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ 805.0ՔՄ ՇԵՆՔԱՅԻՆ ՄԱԿԵՐԵՍԻՑ 595.5ՔՄ-Ն /363.6ՔՄ 2-ՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ, 78.4ՔՄ ԽՈՀԱՆՈՑԸ ԵՎ 1-ԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻՑ 153.5ՔՄ/՝ ,,ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՎԱՐԺԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ,, ՊՈԱԿ-ԻՆ, 182.1ՔՄ-Ն՝ <<ԱՎԱՆԴՈՒՅԹ>> ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ավագանին նշում է, որ Երիտասարդական 2 հասցեում գտնվող նախկին մանկապարտեզի տարածքում երկար տարիներ գործում է ,,ՀՀ Տավուշի մարզի Իջևանի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն,, ՊՈԱԿ-ն և ,,Ավանդույթ,, ՀՈԱԿ-ն:

Հաշվի առնելով համայնքի երեխաների կրթության, դաստիարակության անհրաժեշտությունը և ավանդույթների պահպանման կարևորությունը

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Երտասարդական փողոցի թիվ 2 հասցեում գտնվող նախկին մանկապարտեզի 805.0քմ շենքային մակերեսից 595.5քմ-ն /363.6քմ 2-րդ մասնաշենքը, 78.4քմ խոհանոցը և 1-ին մասնաշենքի առաջին հարկից 153.5քմ/ ,,ՀՀ Տավուշի մարզի Իջևանի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն,, ՊՈԱԿ-ին, իսկ 182.1քմ-ն <<Ավանդույթ>> ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու մասին՝ համաձայն կից հատակագծի:
2. 1-ին մասնաշենքի առաջին հարկի 27.4քմ-ն հանդիսանում է որպես ընդհանուր օգտագործման տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ — ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ — ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ — ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ — ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ — ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*25 փետրվարի 2016թ. N 29Ա*

## 26. ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ համայնքի տարածքում գործող կրթության, մշակույթի և սպորտի
բնագավառի համայնքային ենթակայության 10 հիմնարկների աշխատանքների կազմակերպումը բարելավելու,
նրանց գործունեությունը վերահսկելու համար անհրաժեշտություն է առաջացել համայնքապետարանի
աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնում կատարել փոփոխություն՝ 2-րդ կարգի մասնագետի
մեկ հաստիքը կրճատել և փոխարենը ավելացնել 1-ին կարգի մասնագետի մեկ հաստիք:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը,
հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն 1-2 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Իջևանի քաղաքային համայնքի ավագանու 28.12.2015թ «Իջևանի
քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և
պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 62Ա որոշումը:
3. Իջևան համայնքի ղեկավարին՝ Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության
պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ
սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի
համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու
մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ — ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ — ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ — ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ՎԱՀԵ ԴԱԼՈՒՄՅԱՆ — ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ — ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԱԼՈՒՄՅԱՆ

Հավելված 1

Իջևանի քաղաքային համայնքի ավագանու 25.02.2016թ թիվ 29Ա որոշման

# ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատակազմը կազմված է 4 բաժիններից՝

**Առանձնացված ստորաբաժանում**

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Իջևանի տարածքային բաժին

**Կառուցվածքային ստորաբաժանումներ**

2. Ֆինանսական բաժին
3. Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին
4. Առևտրի, տրանսպորտի, սպասարկումների և կապի բաժին
5. Ներքին աուդիտի բաժին
6. Կրթության, մշակույթի և սպորտի բաժին

Հավելված 2

Իջևանի քաղաքային համայնքի ավագանու 25.02.2016թ թիվ 29Ա որոշման

# ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2016թ

Աշխատակիցների թվաքանակը՝ 47

| Հ/Հ | | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| | | ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ | | |
| 1. | | Համայնքի ղեկավար | 1 | 470000 |
| | | ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 380000 |
| 3 | | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 300000 |
| 4 | | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 150000 |
| | | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 5 | | Աշխատակազմի քարտուղար | 1 | 330000 |
| | | *Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում* | | |
| | | *ՔԿԱԳ Իջևանի տարածքային բաժին* | | |
| 6 | | Բաժնի պետ | 1 | 256600 |
| 7 | | 1-ին կարգի մասնագետ | 2 | 133600 |
| | | *Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ* | | |
| | | *Ֆինանսական բաժին* | | |
| 8 | | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 9 | | Գլխավոր մասնագետ | 1 | 158227 |
| 10 | | Առաջատար մասնագետ | 2 | 124775 |
| 11 | | 1-ին կարգի մասնագետ | 1 | 100680 |
| | | *Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին* | | |
| 12 | | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 13 | | Գլխավոր մասնագետ –ճարտարապետ | 1 | 158227 |
| 14 | | Առաջատար մասնագետ | 2 | 124775 |
| 15 | | 1-ին կարգի մասնագետ | 1 | 100680 |
| | | *Աշխատակազմի մասնագետներ* | | |
| 16 | | Գլխավոր մասնագետ | 4 | 158227 |
| 17 | | Առաջատար մասնագետ | 3 | 124775 |
| 18 | | 1-ին կարգի մասնագետ | 4 | 100680 |
| | | *Առևտրի, տրանսպորտի, սպասարկումների և կապի բաժին* | | |
| 19 | | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 20 | | Գլխավոր մասնագետ | 1 | 158227 |
| 21 | | Առաջատար մասնագետ | 1 | 124775 |
| 22 | | 2-րդ կարգի մասնագետ | 2 | 83358 |
| | | *Կրթության, մշակույթի և սպորտի բաժին* | | |
| 23 | | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 24 | | Առաջատար մասնագետ | 1 | 124775 |
| 25 | | 1-ին կարգի մասնագետ | 2 | 100680 |
| 26 | | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 83358 |
| | | *Ներքին աուդիտի բաժին* | | |
| 27 | | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 28 | | Առաջատար մասնագետ | 1 | 124775 |
| | | ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ | | |
| 29 | | Քարտուղարուհի | 1 | 95000 |
| 30 | | Խմբագիր | 1 | 92550 |
| | | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 31 | | Վարորդ | 1 | 130000 |
| 32 | | Պարետ | 1 | 72751 |
| 33 | | Էլեկտրիկ | 1 | 72751 |
| 34 | | Ավտոբուսի վարորդ | 1 | 72751 |
| | | Ընդամենը | 47 | 7500456 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*25 փետրվարի 2016թ. N 30*

## 27. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Տերյան փողոցում 19.8քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0115-0006/ հողամասը կադաստրային քարտեզում արտացոլված է, որպես ֆիզիկական անձանց պատկանող բնակելի կառուցապատման հողամաս, սակայն որևէ անձի անվամբ հաշվառված չէ և դրա նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք գրանցված չէ:
Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Տերյան փողոցում 19.8քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0115-0006/ հողամասի նկատմամբ Իջևան համայնքի սեփականության իրավունքը գրանցելուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ — ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ — ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ — ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ — ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ — ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*25 փետրվարի 2016թ. N 31*

## 28. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱԼԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ ըստ ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տվյալների Իջևան համայնքում հաշվառված բնակչության թիվը 2015թ հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 18736 մարդ:

Ուստի ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 27-րդ և 31-րդ հոդվածներով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Իջևան համայնքի ղեկավարի դրույքաչափը հաստատել 470000 դրամ, տեղակալի դրույքաչափը՝ 380000 դրամ:
2. Հանձնարարել ֆին բաժնին /պետ Վ.Գևորգյան/ հաստիքացուցակում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ — ԱՐՏՈՒՐ ՕՀԱՆՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ — ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ — ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ — ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ — ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*25 փետրվարի 2016թ. N 32*

## 29. ,,ԻՋԵՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ,, ՓԲԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևանի քաղաքային համայնքի ,,Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոց,, ՓԲԸ-ի գործունեությունը քաղաքապետի 18.05.2015թ թիվ 249Ա որոշմամբ դադարեցված է:

Հաշվի առնելով վերոհիշյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ կետով

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Ս/թ մարտի 1-ից լուծարել Իջևանի քաղաքային համայնքի ,,Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոց,, փակ բաժնետիրական ընկերությունը:
2. Ստեղծել լուծարման հանձնաժողով և օրենքով սահմանված կարգով իրականացնել ,,Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոց,, ՓԲԸ-ի լուծարման գործընթացը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ — ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ — ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ — ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ՎԱՀԵ ԴԱԼՈՒՄՅԱՆ — ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ — ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԱԼՈՒՄՅԱՆ